ուրումն իշխանի յայլազգեաց, որ կոչէր Մէհէմմէտ աղա, և էր հոգաբարձու նորա Մարտիրոս վարդապետ Կաֆացի աշակերտ նորուն, որ եւ դեգերէր 'ի դրունս մեծամեծաց վասն նորա և վասն աղատութեան Ս. Յակոբայ։

Յետ ջնջելոյ ապստամբ Բդեշխից ձեռք կոչեցելոց, իբրեւ ազդ եղեւ Եպարքոսին 'ի Թլթլեանց, թէ Եղիազար Թադուցեալ կայ 'ի պարտիզի ուրեք, եւ երթեւեկեն առ նա բարեկամք նորա, առաքեաց վաղվաղակի զօրականս հանդերձ մատնչաւն, որ կոչիւր Շէկ Գասպար, ունել զնա, և նոցա կալեալ զեղիազար՝ տարան յատեան։ Խօսեցաւ ընդ նմա Եպարքոսն բարկութեամբ, և ասէ. դո՞ւ ես փոխանորդ Պատրիարքին Երուսաղէմի, ասա՛ ինձ զի՞նչ էառ 'ի քէն Թիյար Օղլու։ Եւ նա ասէ՝ զամենայն զոր ինչ ունէի, էառ յինէն, Տէր, և զվանս մեր՝ որ Ս. Յակոբ ասի՝ տուեալ այլոց՝ կալաւ զիս ընդ իւր խաբկանօք յարդելանս, թէ ահա երթամ առ Թադաւորն, և յայնժամ տաց զվանս ձեր 'ի ձեռս քո, այլ ես իբրեւ տեսի զյայտնի ապստամբութիւն նորա, և որոց ընդ նմա, ելի 'ի ձեռաց նորա և փախեայ այսր յոտս ձեր։ Ասէ Եպարքոսն, դու ինքնի՞ն ետուր Թիյար Օղլուին զվանսն, թէ նա էառ 'ի քէն։ Ոչ համարձակեալ Եղիազարու ասել թէ հրամանաւ քո եղեւ այն, պատասխանի ետ և ասէ, նա էր Տէր երկրին, և ես զիա՞րդ կարէի ընդդիմանալ նմա։ Ասէ Եպարքոսն, կորիցէ երկիր ձեր ձեօք հանդերձ յանդունդս։ Ասէ Եղիազար, բարերջանիկ Տէր՝ փառաւոր իշխան, մի անիծաներ զերկիր, այլ թափեա զցասումն քո յիմ վերայ. միայն խնայեա յաղգս իմ աղաչեմ, և արա իրաւունս 'ի փառս Արքայի և 'ի պատիւ երեսաց քոց, որպէս գիտէ Տէրութիւնդ։

Իսկ Եպարքոսն քանզի դեռ կասկած ունէր զնմանէ, հրաման ետ հանել զնա յատենէ անտի և մատնել 'ի ձեռս դահճապետին, պնդել զոտս նորա յերկաթ, և պահել յօթեւանս զինուորաց Եէնիչերի կոչեցելոց, եւ էր առաջին ժամ գիշերոյ 'ի 18 աւուր Փետրվարի յորում պահու դայր եւ ձիւն սաստիկ, եւ ոչ ոք 'ի Հայոց իշխէր երեւիլ անդ 'ի դրան։

Բայց սակայն մի ոմն 'ի ծանօթից Եղիազարու, Երեմիա Զելէպի Բեօմիւրճեանց, այր երեւելի եւ զգօն, տուեալ